



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում

Մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, 13 սեպտեմբերի 2012

## ԵՄ պատվիրակությունը մասնակցում է <Մենք կարող ենք> շրջակա միջավայրի մաքրման միջոցառմանը

Այս շաբաթ օրը՝ սեպտեմբերի 15-ին, Հայաստանում ԵՄ պատվիրակությունը մասնակցելու է շրջակա միջավայրի մաքրման՝ <Մենք կարող ենք> միջոցառմանը: Միջոցառումը կազմակերպվում է Հայաստանի <Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի> կողմից՝ նպատակ ունենալով իրականացնել «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ԱՂԲԻ» համահայկական կամավորական ամենամեծ նախաձեռնությունը:

ԵՄ պատվիրակության տասներկու աշխատակիցներ և նրանց եռեխաները միանում են այս նախաձեռնությանը: Նրանք ցանկանում են մաքրել Պատվիրակության հարակից Ֆրիկ փողոցը և տեսակավորել հավաքված աղբը: Պատվիրակությունն ուրախ է իր համեստ ներդրումը կատարել ավելի մաքուր Հայաստան ունենալու հարցում: Շրջակա միջավայրի պահպանումը գերակա քաղաքականություն է Եվրամիության համար:

### Լրացուցիչ տեղեկություններ

<Մենք կարող ենք> համաշխարհային շարժման հիմքում է ընկած 2008թ.-ին Էստոնիայում իրականացված մեծ համաէստոնական աղբահավաքը, որի ընթացքում ավելի քան 50 000 ակտիվիստ 5 ժամվա ընթացքում կարողացան մաքրել Էստոնիան ավելի քան 10 000 տոննա կենցաղային աղբից: Այս միջոցառումը օրինակ ծառայեց նաև այլ երկրների համար (Լատվիա՝ ավելի քան 60 000 մարդ, Լիտվա՝ ավելի քան 110 000 մարդ, Սլովենիա՝ ավելի քան 246 000 մարդ մասնակցել է նմանատիպ միջոցառումների): Արդեն իսկ հարյուրավոր հեղինակավոր կազմակերպություններ միացել են շարժմանը և միլիոնավոր կամավորների օգնությամբ մաքրելու են իրենց երկիրը աղբից: 2012թ. Հայաստանը նույնպես միացել է այս էկոլոգիական շարժմանը: Հայաստանում <Մենք կարող ենք> շարժման պաշտոնական ներկայացուցիչն է «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ն: